



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախկին ազատագրված անձանց
որպես ՄԻԱՎ համաճարակի տեսակետից
թիրախ խմբեր ճանաչելու կարևորության
վերաբերյալ

Սույն վերլուծությունն իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության Նախաձեռնությամբ՝ «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության ՄԻԱՎ-ին հակազդման ազգային ծրագրում չներառված խոցելի խմբերի շրջանում» ծրագրի շրջանակներում, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի թիրախային խմբերին արագ արձագանքման օգնության ֆոնդի ֆինանսական աջակցությամբ:

Վերլուծության նպատակն է ուսումնասիրել և պատկերացում կազմել, թե որքանով են բավարար ՄԻԱՎ-ի կանխարգելման, հետազոտության և բուժման ծրագրերի ծավալն ու բովանդակությունը ՀՀ նախկին դատապարտյալների շրջանում:

«Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը շարունակական կերպով ջանքեր է ներդնելու ՀՀ երիտասարդության և նախկին դատապարտյալների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման, հետազոտության և բուժման հասանելիությունը մեծացնելու համար:

Կազմեց Հովհաննես Մադոյանը

Դիտարկեց Սերգեյ Գաբրիելյանը

Ձևավորեց Լևոն Զիլինգարյանը

©«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական կազմակերպություն
Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2021թ.

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հապավումներ

Նախաբան

Մեթոդաբանություն և սահմանափակումներ

Վիճակագրություն

Պատմական ակնարկ

ՄԻԱՎ-ի հետ կապված ծառայությունների
հասանելիությունը ՔԿՀ-ներում

ՄԻԱՎ-ի հետ կապված ծառայությունների
հասանելիությունը ազատվելուց հետո

Հիմնավորում և վերլուծություն

Առաջարկներ

Աղբյուրներ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳՅ	ՁԻԱՅ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ / Գլոբալ Հիմնադրամ
ԹՆՕ	Թմրամիջոցների ներարկային օգտագործողներ
ԻՀԱԿ	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
ԿՍԿ	Կոմերցիոն սեռական ծառայություն մատուցող կանայք
ՁԻԱՅ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՁԻԱՅ-ի ԿՀԿ	ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄՅՅ	ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի և տուբերկուլոզի ծրագրերի համակարգող հանձնաժողով
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՓԲ	Մեթադոնային փոխարինող բուժում
SUS	Տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդ
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՆԱԽԱԲԱՆ

Տվյալ փաստաթղթում անդրադարձ է կատարվել ՄԻԱՎ-ի համաճարակին հակազդման միջոցառումներից դուրս մնացած խմբին՝ նախկին դատապարտյալներին: Ի տարբերություն քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՅ) գտնվող անձանց, նախկին ազատագրված անձիք չեն դիտարկվում ՄԻԱՎ-ի տեսակետից թիրախային խումբ և իրենց շրջանում չեն իրականացվում ՄԻԱՎ-ի կանխարգելման և հետազոտության նպատակային ծրագրեր:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նշում է, որ քրեակատարողական հիմնարկներում բարձր է ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը, ինչը կապված է բանտերի գերբնակեցման, թմրամիջոցների օգտագործման ռիսկային պրակտիկաների, դաջվածքների, անպաշտպան սեռական հարաբերությունների և բժշկական օգնության սահմանափակ հասանելիության հետ (1):

ՔԿՅ-ներում ՄԻԱՎ համաճարակի առանձնահատկություններից է նաև այն, որ այստեղ ավելի հաճախ են հայտվում ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի և ռիսկի խմբերի ներկայացուցիչները: Օրինակ՝ քանի որ Հայաստանում քրեականացված են թմրամիջոցների օգտագործման հետ կապված գրեթե բոլոր գործողությունները՝ պահելը, պատրաստելը, ձեռք բերելը, հյուրասիրելը, ՔԿՅ-ների բնակչության զգալի մասը կազմում են թմրամիջոցներ օգտագործող անձիք: Այդ պատճառներով էլ ՄԻԱՎ-ի տարածվածությունը սովորաբար ավելի բարձր է, քան ընդհանուր բնակչության շրջանում:

(1) <https://www.euro.who.int/en/health-topics/communicable-diseases/hiv-aids/policy/policy-guidance-for-key-populations-most-at-risk2/hiv-in-prisons>

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՄՆԵՐ

Վերլուծության համար ուսումնասիրվել են մի շարք փաստաթղթեր, ներառյալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային 4 ծրագրերը, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ վարքագծային և կենսաբանական հետազոտությունները, տեղական հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները, միջազգային և փորձագիտական կազմակերպությունների ուղեցույցները և այլն: Վիճակագրության վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է ԻՀԱԿ-ից հարցումների արդյունքում: Աղբյուրների ամբողջական ցանկը ներկայացված է փաստաթղթի վերջում:

Բացի փաստաթղթերի ուսումնասիրությունից՝ իրականացվել են թվով 5 խորքային հարցազրույցներ: Խմբի առանձնահատկությունից ելնելով հարցազրույցները չեն ձայնագրվել, իրականացվել են միայն գրառումներ:

Փաստաթղթերի ուսումնասիրության և Նախկին դատապարտյալների հետ խորքային հարցազրույցների միջոցով փորձ է արվել կազմել պատկերացումներ ՔԿՀ-ներում գտնվողների ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկայնության, ռիսկերի և խոցելիության կառավարման հնարավորությունների մասին, հասկանալ թե որքանով է արդարացված դիտարկել Նախկին ազատազրկված անձանց որպես թիրախ խումբ ՄԻԱՎ համաճարակին հակազդման տեսակետից:

Ժամանակի և ռեսուրսների սղության, ինչպես նաև խմբի դժվար հասանելիության պատճառով հարցազրույցների թիվը բավարար չի եղել հետազոտություններին ներկայացվող ստանդարտներին համապատասխանելու համար: Այդ իսկ պատճառով իրենց արդյունքներն օգտագործվել են որպես կողմնորոշիչ տեղեկատվության աղբյուր: Օրինակ՝ ստացված տեղեկատվության արդյունքում իրականացվել է լրացուցիչ գրականության ուսումնասիրություն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) պայմանավորված հիվանդության (ՄԻԱՎ վարակ) և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2021թ. մայիսի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4325 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, ներառյալ մինչև 16 տարեկան երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 74 դեպք:

ՄԻԱՎ վարակ ունեցողների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 3002 մարդ, որը կազմում է դեպքերի ընդհանուր թվի 69.4%-ը, իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 1323 դեպք, ինչը կազմում է դեպքերի ընդհանուր թվի 30.6%-ը:

ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի գրանցված նոր դեպքերի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը - 81.6%, հոմոսեքսուալ ճանապարհը - 9.2%, թմրամիջոցների ներարկային գործածումը - 5.7%, մորից երեխային փոխանցումը - 2.4%:

ՄԻԱՎ վարակակիրների հաշվարկային թիվը կազմում է 4850:

ՄԻԱՎ վարակի դեպքերի արձանագրության սկզբից մինչև 2021 թ. օգոստոսի 1-ը Հայաստանում ազատազրկված անձանց շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 134 դեպք ՀՀ քաղաքացիների և 6 դեպք օտարերկրյա քաղաքացիների շրջանում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումները նախատեսված են եղել բոլոր ՄԻԱՎ համաճարակին հակազդման ազգային ծրագրերում: Թե՛ ազգային ծրագրերում, թե՛ միջազգային փաստաթղթերում ազատագրված անձիք նշվում են որպես թիրախ բնակչություն կամ առավել վտանգի ենթարկվող խումբ:

Ազգային ծրագրերի իրականացման տարբեր փուլերում ՔԿՂ-ներում գտնվողներին տրամադրվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն, տրամադրվում է ՄՓԲ, նրանց շրջանում իրականացվել են պահպանակների և ներարկիչների հասանելիության մեծացման միջոցառումներ, կրթական նախաձեռնություններ, փորձ է արվել ներդնել «հավասարը հավասարին» եղանակով կրթություն: Ժամանակի ընթացքում հիմնական շեշտը դրվել է ՔԿՂ-ներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման հասանելիության պահովմանը և ՄՓԲ հասանելիության մեծացմանը:

Սակայն, ՄԻԱՎ/ՁԻԱՂ-ի կանխարգելման ազգային ծրագրերում նախկին ազատագրված և դատապարտված անձինք չեն դիտարկվում որպես առանձին թիրախ խումբ:

ՄԻԱՎ-Ի ՅԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՔԿՀ-ՆԵՐՈՄ

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում հասանելի են ՄԻԱՎ-ի հետ կապված հետևյալ ծառայությունները՝

- **ՄԻԱՎ վարակի վերաբերյալ թեստավորում ՔԿՀ-ներում** ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունը և հետազոտությունն իրականացվում է «Կալանավորված անձանց և դատապարտյալների՝ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բուժաշխատողների կողմից նախաթեստային և հետթեստային խորհրդատվության ու հետազոտության իրականացման կարգով»: ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն առաջարկվում է բոլոր ՔԿՀ մուտք գործած անձանց, ինչպես նաև նշված կարգում ներկայացված ցուցումների համապատասխան: Դրական դեպքերում ախտորոշման հաստատումն իրականացվում է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ում (ԻՀԱԿ):
- **ՄԻԱՎ վարակի դիսպանսեր հսկողություն և հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում** ՔԿՀ-ներում գտնվող ՄԻԱՎ վարակով պացիենտների դիսպանսերային հսկողությունը, այդ թվում՝ նաև լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունները, ուղեկցող հիվանդությունների ախտորոշումը և բուժումը, ՀՌՎ դեղերի տրամադրումն իրականացվում է «Հակառետրովիրուսային դեղերի կիրառմամբ ՄԻԱՎ վարակի բուժման և կանխարգելման կլինիկական ուղեցույցի» համաձայն: ՔԿՀ-ներից ուղեգրված ՄԻԱՎ վարակով պացիենտների արյան փորձանմուշների իմունաբանական և վիրուսաբանական հետազոտությունները կատարվում են ԻՀԱԿ-ում: ՀՌՎ դեղերի տրամադրումն իրականացվում է ԻՀԱԿ-ի կողմից:
- **Մեթադոնային փոխարինող բուժում (ՄՓԲ)** ՄՓԲ տրամադրվում է Հայաստանի բոլոր ՔԿՀ-ներում և բուժումն իրականացվում է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից: Վերջին տարիներին բավականին հեշտացվել է ՔԿՀ-ներում փոխարինող բուժման մեջ ընդգրկվելու գործընթացը:

ՔԿՀ-ներում միանվագ ներարկիչների հասանելիությունը կարելի է գնահատել հարաբերական: Այսինքն, դրանք հնարավոր է անվճար ստանալ ՔԿՀ-ի բուժանձնակազմից, որևէ քրոնիկ հիվանդության համար պարբերաբար ներարկումներ ստանալու անհրաժեշտության պատրվակով: Հաճախ թմրամիջոց օգտագործող անձը խնդրում է խցակցին, ով կարող է պատճառաբանել ներարկիչների անհրաժեշտությունը, իր համար ներարկիչներ վերցնել բուժկետից:

ՄԻԱՎ-Ի ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ազատվելուց հետո ՄԻԱՎ վարակ ունեցող անձը շարունակում է իր դիսպանսեր հսկողությունը և ՀՌՎ բուժումը ԻՀԱԿ-ում: Չնայած նրան, որ ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում ԻՀԱԿ-ի մասնագետները մասնակցում են պացիենտի բուժման կազմակերպման և տրամադրման գործընթացում, լինում են դեպքեր, որ մարդիկ ժամանակին չեն դիմում ԻՀԱԿ իրենց դիսպանսեր հսկողությունը և բուժումը շարունակելու համար: Այս խնդիրը մասնագետները կապում են նոր ազատված մարդկանց շրջանում բավարար գիտելիքներ չունենալու և ազատվելուց հետո սկզբնական շրջանում 3 – 6 ամիսներ, սոցիալ-հոգեբանական խնդիրների հետ:

ՔԿՀ-ներում ՄՓԲ ստացող անձինք ազատվելուց հետո հնարավորություն ունեն շարունակել փոխարինող բուժումն անվճար: Դրա համար անհրաժեշտ է ներկայացնել ՄՓԲ տրամադրող բուժհաստատություն ՔԿՀ-ի բժիշկի համապատասխան գրություն: ՔԿՀ-ներից դուրս ՄՓԲ-ն հասանելի է երևանում, Գյումրիում, Վանաձորում և Կապանում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՔԿՀ-ների դերը ՄԻԱՎ համաճարակի զարգացման մեջ կայանում է ինչպես նրանում, որ ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել ռիսկի ենթարկվող խմբի՝ թմրամիջոցներ ներարկային օգտագործող անձիք (ԹՆՕ) և այլ խոցելի խմբերն ավելի հաճախ են ազատագրվում, այնպես էլ նրանում, որ ՔԿՀ-ներում դրսևորում են ռիսկային վարքագիծ պաշտպանման միջոցների ցածր հասանելիության պայմաններում:

Հայաստանյան ՔԿՀ-ներում թմրամիջոցների օգտագործման և սեռական հարաբերությունների մասին նշել են նաև խորքային հարցազրույցների մասնակիցները: Ըստ իրենց՝ ազատագրված ԹՆՕ-ները հիմնականում օգտագործում են իրենց անձնական ներարկիչները, բայց նշել են ներարկիչների և այլ պարագաների համատեղ օգտագործման մեծ հավանականությունը: Նրանք նաև նշել են, որ անպաշտպան սեռական հարաբերությունների հարաբերությունների հավանականությունը բավականին մեծ է, չնայած ՔԿՀ-ներում հնարավոր է ձեռք բերել պահպանակ:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի գեյ, բիսեքսուալ և տրանս (ԳԲՏ) անձանց խոցելիությունը ՔԿՅ-ներում: ՔԿ համակարգում ԳԲՏ անձինք ենթարկվում են խտրականության այլ ազատագրված անձանց և աշխատակիցների կողմից: Խտրականության պատճառով հաճախ է սահմանափակվում բժշկական ծառայությունների հասանելիությունը նրանց համար: ԳԲՏ անձիք առավել հաճախ են ենթարկվում սեռական բռնության կամ շահագործման, ինչը մեծացնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի տարածման վտանգը: Ինչ վերաբերում է սեռական բռնության հետևանքով առաջացած առողջական խնդիրներին (վնասվածքներ կամ հոգեբանական տրավմաներ), ապա մտահոգության տեղիք է տալիս այն, որ նշված խմբի անձինք չեն ստանում բավարար բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն:

ԳԲՏ անձանց խոցելիության և խնդիրների, նրանց նկատմամբ բռնության, ներառյալ սեռական, մասին փաստում են նաև ՀՀ ԱՆ ՔԿՅ ների հասարակական դիտորդական խմբի զեկույցները: Ի դեպ, հաճախ քրեակատարողական հիերարխիայում ԳԲՏ անձանց են հավասարեցվում քրեական ենթամշակույթի օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած, որոշակի հանցագործություններ կատարած ազատագրված անձինք: Վերոնշյալ խմբերի անձինք ենթարկվում են հոգեբանական ճնշումների, իսկ որոշ դեպքերում՝ սեռական բռնությունների, ոտնձգությունների և շահագործման մյուս ազատագրված անձանց կողմից:

Նշված հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՔԿՅ-ներում գտնվող անձինք ենթարկվում են ՄԻԱՎ-ով վարակվելու զգալի ռիսկի: Այնուամենայնիվ, ՔԿՅ-ներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորումները չեն կրում պարբերական և սկրինինգային բնույթ, նրանք հիմնականում առաջարկվում են ՔԿՅ ընդունվելիս: Հարցազրույցի մասնակիցներից նշել են, որ իրենց նախաձեռնությամբ հետազոտվել են նաև պատիժը կրելու ընթացքում, սակայն այդ պրակտիկան չի կրում ռուտին բնույթ:

Հարցազրույցների մասնակիցները նշել են նաև, որ ՔԿՅ-ներում չեն իրականացվում ՄԻԱՎ-ի կանխարգելման համար կրթական և տեղեկատվական աշխատանքներ, որի անհրաժեշտությունն իրենց կարծիքով մեծ է: Այդ անհրաժեշտությունը կապված է թե՛ հենց քրեակատարողական հիմնարկում եղած ժամանակ ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկի հետ, թե՛ նրա հետ, որ ազատվելուց հետ անձը կարող է շարունակել ռիսկային վարքագիծ դրսևորել, մասնավորապես ԹՆՕ-ները, սեքս աշխատանքի մեջ ներգրավված անձիք:

ենթարկվում են խտրականության այլ ազատագրկված անձանց և աշխատակիցների կողմից: Խտրականության պատճառով հաճախ է սահմանափակվում բժշկական ծառայությունների հասանելիությունը նրանց համար:

ԳԲՏ անձիք առավել հաճախ են ենթարկվում սեռական բռնության կամ շահագործման, ինչը մեծացնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, այդ թվում՝ ՄԻԱՎ-ի տարածման վտանգը: Ինչ վերաբերում է սեռական բռնության հետևանքով առաջացած առողջական խնդիրներին (վնասվածքներ կամ հոգեբանական տրավմաներ), ապա մտահոգության տեղիք է տալիս այն, որ նշված խմբի անձինք չեն ստանում բավարար բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն:

ԳԲՏ անձանց խոցելիության և խնդիրների, նրանց նկատմամբ բռնության, ներառյալ սեռական, մասին փաստում են նաև ՀՀ ԱՆ ՔԿՀ ների հասարակական դիտորդական խմբի զեկույցները: Ի դեպ, հաճախ քրեակատարողական հիերարխիայում ԳԲՏ անձանց են հավասարեցվում քրեական ենթամշակույթի օրենքներին չենթարկվող կամ դրանք խախտած, որոշակի հանցագործություններ կատարած ազատագրկված անձինք: Վերոնշյալ խմբերի անձինք ենթարկվում են հոգեբանական ճնշումների, իսկ որոշ դեպքերում՝ սեռական բռնությունների, ոտնձգությունների և շահագործման մյուս ազատագրկված անձանց կողմից:

Նշված հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՔԿՀ-ներում գտնվող անձինք ենթարկվում են ՄԻԱՎ-ով վարակվելու զգալի ռիսկի: Այնուամենայնիվ, ՔԿՀ-ներում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորումները չեն կրում պարբերական և սկրինինգային բնույթ, նրանք հիմնականում առաջարկվում են ՔԿՀ ընդունվելիս: Հարցազրույցի մասնակիցներից նշել են, որ իրենց նախաձեռնությամբ հետազոտվել են նաև պատիժը կրելու ընթացքում, սակայն այդ պրակտիկան չի կրում ռուտին բնույթ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հավանական պատճառներից մեկը, թե ինչու նախկին ազատագրված և դատապարտված անձինք չեն առանձնացվում որպես թիրախ խումբ ՄԻԱՎ համաճարակին հակազդման ծրագրերում, այն է որ համարվում է, թե այդ անձինք ազատվելուց հետո դառնում են իրենց հիմնական խմբի՝ ԹՆՕ, տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ, տրանս անձ, ներկայացուցիչ: Հավանաբար համարվում է, որ իրենք կարող են ներգրավվել ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում որպես այդ խմբերի ներկայացուցիչ:

Ազատագրվումը մեծացնում է մարդկանց խոցելիությունը ՄԻԱՎ-ի նկատմամբ: Դա կարող է կապված լինել առաջացած սոցիալական խնդիրների հետ, որոնք կարող են մարդուն ստիպել ներգրավվել, օրինակ, սեքս աշխատանքի մեջ, արտագնա աշխատանքային միգրացիայի: Հոգեբանական խնդիրները կարող են նպաստել ռիսկային վարքագիծ դրսևորելուն: Ելնելով նշվածից, ինչպես նաև նրանից, որ ՔԿՀ-ներում գտնվելու ընթացքում ազատագրված անձինք կարող են ենթարկվել ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկի անհրաժեշտ է տրամադրել ՄԻԱՎ-ի կանխարգելման, հետազոտության և բուժման հետ կապված ծառայությունները ազատագրվման ընթացքում և ապահովել դրանց շարունակականությունը ազատվելուց հետո:

Այսպիսով, անհրաժեշտ է

- ՔԿՀ-ներից ազատված անձանց դիտարկել՝ որպես ՄԻԱՎ-ի առումով թիրախ խումբ և մշակել իրենց կարիքներին համապատասխանող միջոցառումներ,
- Իրականացնել ՔԿՀ-ների անձնակազմի ներուժի զարգացում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ,
- Ազատվելուց անմիջապես առաջ ազատագրված անձանց առաջարկել անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն,
- Ազատվելուց անմիջապես առաջ ազատագրված անձանց համար ռուտին կարգով իրականացնել տեղեկատվական սեսիա՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, այլ առողջապահական հարցերի վերաբերյալ, որը կներառի ուղեգրումը համապատասխան կազմակերպություններ,
- Իրականացնել պրոբացիոն ծառայության անձնակազմի ներուժի զարգացում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերում և պրոբացիոն ծառայության գործառույթների մեջ ներառել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի, այլ առողջապահական խնդիրների հետ կապված միջոցառումներ,
- Ապահովել նախկին ազատագրված և դատապարտված անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների ներուժի զարգացումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերում և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտի պետական ու ոչպետական կազմակերպությունների համագործակցությունը:

ԱՂԲՅՈՒՆԵՐ

1. ՀՀ քրեակատարողական հիմնարկներում եվ մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2018 թվականի գործունեության հաշվետվություն
2. «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, «Ազատագրված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 2021
3. <https://www.euro.who.int/en/health-topics/communicable-diseases/hiv-aids/policy/policy-guidance-for-key-populations-most-at-risk2/hiv-in-prisons>
4. 2002-2006 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագիր
5. 2007-2011 թվականներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիր
6. 2013-2016 թվականների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագիր
7. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2017-2021 թվականների ազգային ծրագիր



NewGenerationNGO@gmail.com
www.ngngo.net



+374 60478989
+374 55478980